# ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Միջին ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Միջինացված արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Տեղամասի տարածք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | Դաշտային աշխատանքների ընթացքում, շաբաթական մեկ անգամ 24 ժամ տևողությամբ | 0.071մգ/մ$^3$ |
| | | Ածխածնի օքսիդ | | | 0.8 մգ/մ$^3$ |
| | | Ազոտի երկօքսիդ | | | 0.023 մգ/մ$^3$ |
| Հողային ծածկույթ | Տեղամասի տարածք | Նավթամթերք-ների մնացորդներ | Տեղազննում, նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | 2025 թվականի ընթացքում, ամսեկան մեկ անգամ | Նավթամթերքների մնացորդներ հողային շերտում չեն դիտարկվել |
| Աղմուկ | Մայակովսկի գյուղ | Աղմուկի մակարդակ | Չափում ավտոմատ չափիչ սարքերով | 2025 թվականի ընթացքում, տարեկան մեկ անգամ | 40դԲ |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | Տեղամասի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Տեղամաս և հարակից տարածք | Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն | Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում | 2025 թվականի ընթացքում, տարեկան մեկ անգամ | Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները: Աճում են նաև օշինդրաէֆեմերային տեսակներ՝ Artemisia Fragrans Willd., Kochia Prostrata (L.) Schrad., Capparis |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | spinosa Willd., Ceratoides papposa Botsch. Et Ikonn., Atraphaxis spinosa L., Rhamnus pallasii Fisch. Et Mey., Tanacetum argyrophyllum (C.Koch) Tzvel., Poa bulbosa L. Bromus, Aegilops, Eremopyrum, Alyssum, Aeluropus littroralis (Gouan) Parl.: Տեղամասի շրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կաթնասունները առավել մեծ քանակությամբ ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախածի կեռնեխ, լեռնային խաղտտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ծիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ճերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դոդոշի (Bufo viridis): |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Տեղամասի տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով խոշոր կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր չեն արձանագրվել: Ֆիքսվել են դաշտամկան բազմաթիվ գետնափոր բներ : |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց-վածքներ | Տեղամասի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգումը | | | | |